

Չարց Ի՞նչ է ռոումինգը:

Պատասխան Ռոումինգը ծառայություն է, որը թույլ է տալիս օգտվել բջջային հեռախոսից արտասահմանում առանց SIM քարտի և հեռախոսակապի օպերատորի փոփոխման: Ռոումինգ ծառայության միջոցով հնարավոր է զանգել, ուղարկել հաղորդագրություն, օգտվել ինտերնետ կապից, բայց ծառայություն մատուցողը լինելու է տվյալ երկրի հեռախոսակապի օպերատոր: Սակայն ցանկացած ակցիաներ դադարում են լինել ակտիվ, քանի որ ուժի մեջ են մտնում առանձին սակագնային պլաններ: Գույություն ունի 3 տեսակի ռոումինգ ծառայություն.

- Ներցանցային, որը թույլ է տալիս շփվել տարբեր մարզերում, բայց ցանցի մեկ օպերատորի միջոցով,
- Ազգային, որը հասանելի է միևնույն պետության քաղաքներում, որտեղ չկա տվյալ օպերատորի ծածկույթը,
- Միջազգային, որը թույլ է տալիս հասանելի լինել արտասահմանյան բոլոր երկրներում: